



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ԾՆՈՒՆՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ
14 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2024

Կիրակնօրեայ Ընթերցումներ Էջ 1
Ծանուցումներ Էջ 2

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (54.1-14)

Ուրախացի՛ր, Երուսաղէ՛մ, դուն՝ ամուլդ, որ չէիր ծնաներ. ցնծութեամբ երգէ եւ աղաղակէ, դուն որ չէիր երկներ, որովհետեւ դուն, ամլութեան պատճառով լքուածդ աւելի շատ զաւակ պիտի ունենաս քան ամուսին ունեցողը, - կ'ըսէ Տէրը: Ընդարձակէ՛ վրանիդ տարածութիւնը, ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր. չուանները երկարէ, ցիցերը ամրացուր, որովհետեւ ամէն ուղղութեամբ պիտի տարածուիս շուտով, քու սերունդդ ազգերու պիտի տիրէ եւ անոնց լքած քաղաքները պիտի շինէ ու լեցնէ: Մի՛ վախնար, այլեւս ամօթով պիտի չմնաս. մի՛ ամչնար պիտի չնախատուիս. ամլութեանդ յաւիտենական ամօթը պիտի մոռնաս, այրիութեանդ նախատինքը բնաւ պիտի չյիշես, որովհետեւ Ստեղծիչդ քեզի ամուսին պիտի ըլլայ. Ան՝ որուն անունն է՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԵՐՈՒ ՏԷՐ, Իսրայէլի սուրբ Աստուածը՝ որ պիտի փրկէ քեզ եւ ամբողջ աշխարհին ալ Աստուածը պիտի կոչուի: Լքուած եւ վշտահար կիին մը չէի՞ր, կամ մերժուած նորահարս մը չէի՞ր, երբ Տէրը քեզ կանչեց: Արդ, Աստուած կ'ըսէ. «Թէպէտ կարճ ժամանակ մը քեզ լքեցի, բայց ողորմութեամբ եւ սիրով քեզ պիտի ընդունիմ: Բարկութեան պահուն կարճ ատեն մը երես դարձուցի քեզմէ, բայց յաւիտենական սիրովս պիտի զթամ քեզի, - կ'ըսէ Տէրը, փրկիչդ: «Ինչպէս ժամանակին ջրհեղեղէն ետք Նոյին երգում ըրի՝ այլեւս բնաւ երկիրը չպատժել ջրհեղեղով, նոյնպէս ալ հիմա կ'երդնում որ բարկութեամբս պիտի չպատժեմ քեզ: Լեռները կրնան կորսուիլ եւ բլուրները չքանալ, բայց ողորմութիւնս անպակաս պիտի ըլլայ քու վրայէդ, խաղաղութեան ուխտս անսասան պիտի մնայ, - կ'ըսէ ողորմած Տէրը: Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի

ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիւրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՄՈԹԷՈՍԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (1.1-11)

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի, խնդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին սխալ վարդապետութիւններ ուսուցանելէ եւ չզբաղին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին ամրապնդման եւ Աստուծոյ փրկութեան ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բղխած սէրը: Շատեր այս պատուէրը մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

Գիտենք թէ Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի: Սակայն գիտենք նաեւ թէ օրէնքը արդարներուն համար դրուած չէ, այլ՝ անօրէններուն եւ անհնազանդներուն, ամբարիշտներուն եւ մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր եւ մայր անարգողներուն,

մարդասպաններուն, պողնկութիւն ընողներուն, արուագէտներուն, մարդ առեւանգողներուն, ստախոսներուն, սուտ երգում ընողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ տուած պարկեշտութեան պատուէրներուն. պատուէրներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ ես հաւատարմօրէն քարոզեցի եփեսացիներուն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(2.1-11)**

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին:

Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունին»: «Մայր, ինծի այս մասին ըսելու պէտք չունիս», պատասխանեց Յիսուս, «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»: Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ ձեզի, կատարեցէ՛ք»:

Հրեաներու մաքրուելու սովորութեան համաձայն հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիդր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»: Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ մատակարարին տարէ՛ք»: Անոնք ալ տարին:

Մատակարարը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէ եւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն մատակարարը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովնան, այն ատեն՝ հասարակը, մինչ զուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյումեանի,
հեռաձայնելով՝ **514 909-5203** թիւին:

ՀԻՄՆՈՒՆԵՐՈՒՄ ԱՅԵԼՈՒԹԻՒՄ

Բարեհաճեցէք հեռաձայնել

Արժ. Տ. Գառնիկ

Աւ. Քհնյ. Գոյումեանի.

514 909-5203 թիւին:

ԱՅԵԼԵՅԷ՛Ր

ԵԿԵՂԵՃՈՅՍ

ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՈ

ԵՒ

ՁԵՐ ՀԱՄԱՆՈՒԹԻՒՄ

յԱՅՏՆԵՅԷՐ (like).

[www.facebook.com/Sourp](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

HagopChurchMontreal

ԱՅԵԼԵՅԷ՛Ր

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՆԻՍ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՃՈՅ ԿԱՅԷՁՈ՝

www.sourphagop.net

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ

ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄՆԵՐՈ

ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷՐ ԿԱՊՈՒԵԼՈՎ

ԵԿԵՂԵՃՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ: